ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ

# ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2012 թվականի N 49-Ա

### ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով հաստատված «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջների» 1-ին կետի 2-րդ ենթակետի և 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, Աբովյանի քաղաքային համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է՝*

1. Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 3-ի «Աբովյանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 64-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշմամբ հաստատված հավելվածի «Կառուցվածքային ստորաբաժանումներ» մասում ավելացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ՝

«8. Ներքին աուդիտի բաժին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11

| | |
|---|---|
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՂԱՄ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՐՅԱՆ |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ | ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ | ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻՄԱԿ | ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ |
| ՓԱՆՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ | |

Դեմ -0
Ձեռնպահ -0

Քաղաքապետ Կ. Գուլոյան

2012թ. հոկտեմբերի 09
ք. Աբովյան